Անցեալ 1888 թուին տնտեսատան տանիքի հողը վերցնելու միջոցին նոր սենեակները շինելու պատճառաւ, դուրս եկաւ մի արձանագիր որ մաքրելով և կարդալով երևեցաւ հետևեալ գրուածքն —

«Շինեցաւ տնտեսատուն,
«Սովեալ մարդոյ սրտին է սիւն,
«Ով սորա մէջ լինի 'ի քուն,
«Աղօթք առնէ գիշերն 'ի բուն,
«Մաղթեմ յիշել և զիս 'ի նոյն,
«Վլաս վարդապետ պիտակ անուն,
«Վերաշայնի Շիրվանատուն:
«..... թվին ՌՃԽ.» (1691): [1])

Կայ և մի արձանագիր հին առաջնորդարանի դրան ճակատի վերայ Յոհան եպիսկոպոսից գրած՝ ըստ այսմ.

«'Ի թվին ՌՄԿԵ. (1816) և ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տեառն Եփրեմի և ի յա-

---

[1]) Մեր ներկայ ժամանակի վարդապետներից մէկը (Մակար վարդապետ Բարխուդարեանցը) «Աղուանք և դրացիք» անունով գրքի մէջ Սաղիանի վանքի տնտեսատունը համարում է գ. բաղին կամ կատուն Աղուանից աշխարհի, այն ինչ յիշեալ վարդապետը ուսուցչութեան պաշտօնով մընալով Սաղիանի վանքումն, տեսել է արձանագիրը և քանիցս կարդացել է իմ ներկայութեանը, որ այն «քառակուսի ձևով շինուած և չորս անկիւններում չորս միջակ սենեակներ ունեցող տունը» է տնտեսատուն վանքի և շինուած 1691 թուին (ՌՃԽ): Իսկ թէ՝ Մեսրովը թարգմանիչը Աղուանից աշխարհում չատ տեղեր կուռքերը կործանելով, տեղերը Խաչ կանգնեցրեց, այդ տեղերը նոյն իսկ վանքերի տաճարների տեղերն են, և ոչ 200 տարեայ շինած տնտեսատունը, որ արձանագիրը պարզ ցոյց է տալի: Ցիրաւի կուռատունք կային Աղուանից աշխարհում, ինչպէս և Հայաստանում, բայց „ծրխոտուած և մրոտուած լինելին սենեակների պատերը, նամանաւանդ կամարակապ ձեղուններն: Այս խոսքերը պէտք է ընդունել տնտեսատան համար ըստորում ամեն օր թոնիր է վառվում տնտեսատան մէջ հաց թխելու և կերակուր եփելու համար: